ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի հոկտեմբերի 18-20-ը Բելառուսի Հանրապետություն, քաղաք Մինսկ գործուղման արդյունքների մասին

1. **ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ**

   Զարա Ասլանյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆ**

   ՀՀ կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության պետ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

Բելառուսի Հանրապետություն, ք. Մինսկ, 2023 թվականի հոկտեմբերի 18-20-ը ներառյալ:

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   Բելառուսի Հանրապետություն, ԱՊՀ մասնակից պետությունների երիտասարդության հարցերով խորհուրդ:

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

Նպատակն էր՝ մասնակցել ԱՊՀ մասնակից պետությունների երիտասարդության հարցերով խորհրդի հերթական նիստին և «100 գաղափար ԱՊՀ համար» միջազգային երիտասարդական նախագծի եզրափակիչ փուլին:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

Հանդիպմանը ընթացքում եղել են քննարկումներ ԱՊՀ երկրներում 2024 թ. կամավորական շարժման նախապատրաստական աշխատանքների, դրա վերաբերյալ կանոնադրության նախագծի, 2024 թ. հումանիտարիային երիտասարդական փառատոնի, 2023 թ. անցկացված կիբերսպորտի երիտասարդական խաղերի արդյունքների և այլ թեմաների վերաբերյալ: Ամփոփվել են ԱՊՀ անդամ պետությունների «100 գաղափար ԱՊՀ-ի համար» միջազգային երիտասարդական նախագծի իրականացման 2022-2023

թվականների արդյունքները և «Համագործակցության երիտասարդական էլեկտրոնային սպորտային խաղեր» էլեկտրոնային սպորտի առաջին մրցաշարի արդյունքները:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Նիստին ներկայացվել է տեղեկատվություն ԱՊՀ անդամ պետությունների 2021-2030 թվականների համար միջազգային երիտասարդական համագործակցության ռազմավարության շրջանակներում 2023 թվականին իրականացված գործողությունների և գրանցած առաջընթացի, 2024 թվականին իրականացվելիք ծրագրերի առնչությամբ: Քննարկվել են «100 գաղափար ԱՊՀ-ի համար» միջոցառման իրականացման հաջորդ՝ 2024-2025 թվականների փուլի նախապատրաստական աշխատանքների և Համաշխարհային երիտասարդական փառատոնին ԱՊՀ երկրների երիտասարդական պատվիրակությունների մասնակցության վերաբերյալ հարցեր: «100 գաղափար ԱՊՀ համար» միջազգային երիտասարդական նախագծի եզրափակիչ փուլում, ՀՀ կողմից ներկայացվել են 4 մրցութային գաղափարներ, որոնցից մեկը՝ «Գիպսակիր հողերի բարելավման արդյունավետ մեթոդ» գաղափարը, «Արդյունավետ բնօգտագործում» անվանակարգում ճանաչվել է հաղթող:

8.ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝

ԱՄՍԱԹԻՎԸ՝ 25.10.2023 թ.